Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 230 - Ա
որոշման

«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՋՐԱՆՑՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՈՒ ՋՐԱԳԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ոռոգման համակարգի բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սպանդարյան» ջրանցքի ՆԿ0+00-ՆԿ186+85 հատվածից սկիզբ առնող (Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան, Անգեղակոթ գյուղերի) ներտնտեսային ջրանցքների ու ջրագծերի ուսումնասիրության և վերակառուցման նախնական գնահատման նախագծի մշակման աշխատանքներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի, Սիսիան համայնք, ջրամատակարարում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 7,355,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի ապրիլի 27-ից մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է «Սպանդարյան» ջրանցքի ՆԿ0+00-ՆԿ186+85 հատվածից սկիզբ առնող (Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան, Անգեղակոթ գյուղերի) ներտնտեսային ջրանցքների ու ջրագծերի ուսումնասիրության և վերակառուցման նախնական գնահատման աշխատանքների նախագծի մշակում՝ մասնավորապես նախագծի բացատրական, գծագրական, աշխատանքային ծավալների և ամփոփագրերի կազմում: Իրականացվելու է՝ 2026 թվականի ապրիլի 27-ից մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 7,355,000 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներտնտեսային ջրանցքների ու ջրագծերի կառուցման ուսումնասիրության և նախնական գնահատման նախագծի մշակման աշխատանքների՝ այդ թվում նախագծի բացատրա-կան, գծագրական, աշխատանքային ծավալների և ամփոփագրերի, կազմման աշխատա-նքների իրականացում՝ 7,355,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ